# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## « ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 » գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք.Վեդի, Գայի 2 2020-07-03-ին ժամը 15:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Խաչատրյան Սամվել | բուժ.գծով փոխտնօրեն |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Զոհրաբյան Ատոմ | դեղագետ |
| | Գաբրիելյան Հասմիկ | հաշվապահ, գանձապահ |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Մանուկյան Անուշիկ | գործավար |
| | Հակոբյան Անդրանիկ | վարորդ, մեխանիկ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լուսինե Բազիկյան | հաշվապահ, գնումների համակարգող |

**1. Հայտերի բացման մասին**

Խաչատրյան Սամվել

**1.1** Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը բացվել են www.armeps.am համակարգի միջոցով սույն թվականի հուլիսի 3-ին, ժամը 15:00-ն, և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**1.2** **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.**
Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

**1.3** **Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին.**
Գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ չեն եղել:

**1.4** **Հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

**2. Տեղեկատվություն գնվելիք ապչանքի գնի և հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

Խաչատրյան Սամվել

**2.1** Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների կազմակերպման գործընթացի>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարկեց գնվելիք ապրանքի գինը մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի գինը մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **1** | **Թթվածնի քթային կատետր (նազալ կանյուլաներ) /մեծահասակի/** | 1125000 |

**2.2** Սահմանված ժամկետում հայտեր ներկայացրած մասնակիցներիմասին.

Հրավերով սահմանված ժամկետներում մասնակցության հայտ են ներկայացվել հետևյալ իրավաբանական անձանց (այսուհետ նաև՝ Մասնակից կամ Մասնակիցներ) կողմից.

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **ՀՎՀՀ** | **Հասցե** | **Հեռախոս** | **Էլ. փոստի հասցե** | **Հայտի ներկայացման օրը** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ | 02205001 | ք.երևան, Լեո-12 | +37410 53-36-30, 53-36-50 | medtechservice@mail.ru | 2020-07-02 |
| 2 | <<Արմեն Լևոնյան>> ՍՊԸ | 01287652 | ք.Երևան, Արարատյան 90/8 | +37410 42-94-00 | pharmlevonyan@yahoo.com | 2020-07-01 |
| 3 | <<Մարգ-Ֆարմացիա>> ՍՊԸ | 00842845 | ք.երևան, Դրոյի 15-51 | +37410 24-64-49 | tenders@margpharma.com | 2020-07-02 |
| 4 | <<Ֆարմեգուս>> ՍՊԸ | 00108127 | ք.Երևան, Մամիկոնյանց 3շ. Բն.41 | +37496 44-59-29 | farmegus@mail.ru | 2020-07-03 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

**<u>3. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

Խաչատրյան Սամվել

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են, բացառությամբ <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթղթի՝ Հավելված 1.1-ի փոխարեն կցված է Գնային առաջարկը՝ Հավելված 2-ը:

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ փաստաթղթերը կազմված են Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

**<u>4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին</u>**

Խաչատրյան Սամվել

**4.1** Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

| Չ/Հ | մասնակցի անվանումը | Առաջարկած գինն՝ առանց ԱԱՀ | Առաջարկած գինը՝ ԱԱՀ | Առաջարկած գինն՝ ընդհանուր ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1 ՝ Բենզին ռեգուլյար՝ կտրոններով** | | | | |
| 1 | <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ | 180000 | 0 | 180000 |
| 2 | <<Արմեն Լառնյան>> ՍՊԸ | 240000 | 0 | 240000 |
| 3 | <<Մարգ-Ֆարմացիա>> ՍՊԸ | 360000 | 0 | 360000 |
| 4 | <<Ֆարմեգուս>> ՍՊԸ | 570000 | 0 | 570000 |

**4.2** Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

**4.3** Պատվիրատի և (կամ) գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի/իցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու վերաբերյալ որոշում չի կայացվել.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Խաչատրյան Սամվել

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների կազմակերպման գործընթացի>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ''Ֆարմեգուս'' ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը՝ 06.07.2020թ. ժամը 17:00-ն շտկել և էլեկտրոնային տարբերակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել Հավելված 1.1 փաստաթուղթը:

Այսպիսով, ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հուլիսի 6-ին, **ժամը 17:00-ին** Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Զոհրաբյան

Հ.Գաբրիելյան

Ա.Հակոբյան

Ա.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բազիկյան